



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

-- հուլիսի 2021 թվականի №--Ա

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի №1Ա ՈՐՈՇՈՒՄԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

1) «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի փետրվարի 12-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ միջնորդելով կարգադրել, որ Հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 1-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ տուգանք կիրառելու մասին» №1Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում) գործողության մեջ չմտնի մինչև խնդիրը վերանայելը և լրացուցիչ որոշում կայացնելը, ինչպես նաև վերանայել Որոշումը և վերացնել՝ անվավեր ճանաչել այն: Ընկերությունը՝ նշելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, եզրահանգել է, որ Որոշումն անվավեր է, քանի որ ընդունվել է օրենքի խախտմամբ, այն ընդունելիս հաշվի չեն առնվել բազմաթիվ փաստական հանգամանքեր և իրավական նորմեր, որոնց վերլուծության արդյունքում Հանձնաժողովն իրավաչափորեն կարող էր գալ եզրակացության, որ Որոշումով արձանագրված հիմքով Ընկերությունը ենթակա չէ պատասխանատվության: Մասնավորապես, որպես նշվածի հիմնավորում, ներկայացվել է հետևյալը.

ա. մատնանշելով Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 8-ի «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի կանխավճարային և հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի արխիվների պահպանման ստանդարտներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №285Ն որոշման 1-ին կետը, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը և Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի

24-ի N°341Ն որոշմամբ տրամադրված N°60 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմանների 1-ին և 8.2 կետերը՝ Ընկերությունը պնդում է, որ ենթակա չէ պատասխանատվության, քանի որ իր թույլ տված ենթադրյալ խախտումները ֆորս մաժորի հետևանք են: Մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում սկսված պատերազմի առաջնագծում են եղել նաև Ընկերության հետ համագործակցող Բագրատաշենի վաճառակետի աշխատակից(ներ)ը: Այն հեռախոսահամարները, որոնց բազան ժամանակին չվարելու համար Ընկերությունը ենթարկվել է պատասխանատվության, գտնվել են վաճառքում կամ վաճառվել են Բագրատաշենի վաճառակետում: Դիլերի հետ 2017 թվականի փետրվարի 14-ին կնքված պայմանագրի համաձայն՝ Ընկերության կողմից բազա վարելն անմիջականորեն կախված է դիլերի կողմից Ընկերությանը համապատասխան պայմանագրերը եռօրյա ժամկետում ուղարկելուց: Դիլերի այդ պարտականությունը պատշաճ չի կատարվել, քանի որ Բագրատաշենի վաճառակետի աշխատակից(ներ)ը գտնվել են պատերազմի առաջնագծում, և ֆիզիկապես անհնար է եղել պայմանագրերը պատշաճ ժամանակին տրամադրելը, որի հետևանքով Ընկերությունը ողջամտորեն հնարավորություն չի ունեցել վարելու այդ պայմանագրերի բազան: Ընկերության համոզմամբ, եթե չլիներ պատերազմը, թե՛ դիլերը, թե՛ Ընկերությունը զրկված չէին լինի իրենց պարտականությունները կատարելու հնարավորությունից: Ակնհայտ է, որ պատերազմական իրադրությունը ֆորս մաժոր է, քանի որ այն արտակարգ և անկանխելի հանգամանք է, որն առաջացել է Ընկերության կամքից անկախ, և որը խոչընդոտել է Ընկերության բնականոն գործունեությունը և հանգեցրել նրա ստանձնած պարտավորության կատարման ձգձգման, և Ընկերությունը հնարավորություն չի ունեցել խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու պատերազմի ազդեցությունը: Ավելին, ըստ Ընկերության, վերջինիս և դիլերի բնականոն գործունեությունը խաթարված է եղել նաև կորոնավիրուսի համաճարակի հետևանքով, քանի որ այն խոչընդոտներ է առաջացնում բոլոր աշխատակիցների սահմանված աշխատանքային ռեժիմով աշխատանքի ներկայանալու համար և հանգեցնում է նրանց անկանխատեսելի բացակայություններին, ինչն էլ կարող է առաջացնել կամ առաջացնում է պարտականությունների կատարման ձգձգումներ: Այսպիսով, Ընկերությունը կարծում է, որ թեև ի հայտ են եկել պարտավորությունների կատարման բազմաթիվ խոչընդոտներ՝ ֆորս մաժոր, այնուամենայնիվ վերջինս հնարավորինս սեղմ ժամկետներում կատարել է իր բազա վարելու պարտականությունը, ջանքեր գործադրելով կարողացել է Հանձնաժողովի սահմանած կանոնները կատարել ոչ թե ֆորս մաժորի ավարտից հետո, այլ դրա գործողության ընթացքում, ինչը վկայում է ստեղծված արտակարգ իրավիճակում Ընկերության գործողությունների բարեխղճության, դրսևորած շրջահայացության մասին,

ինչն էլ բավարար էր Հանձնաժողովի համար Ընկերությանը պատասխանատվության չենթարկելու հետևության հանգելու համար: Միաժամանակ, վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օերնքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, ֆորս մաժորի իրավիճակի առկայության մասին Ընկերության դիտարկումների մասով Որոշմամբ ամրագրված Հանձնաժողովի դիրքորոշման (առ այն, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերով չի հիմնավորվել, որ նշված պարտավորությունների չկատարումը ֆորս մաժորի հետևանք է) կապակցությամբ Ընկերությունը հետևության է հանգել, որ իր ներկայացրած տեղեկությունները հավաստի են, և Ընկերությունից չեն կարող պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ, քանի որ Հանձնաժողովը չի ներկայացրել նման պահանջի առկայության սահմանում օրենսդրությամբ: Ի վերջո, Ընկերության կողմից նշված որևէ փաստի մասին հիմնավոր կասկած ունենալու դեպքում Հանձնաժողովն իրավասու էր և պարտավոր էր ինքնուրույն ձեռնարկել միջոցներ այդ հանգամանքների իսկության մեջ հավաստիանալու համար, ինչն ըստ Ընկերությանը հայտնի տեղեկությունների՝ Հանձնաժողովի կողմից չի իրականացվել,

բ. Ընկերությունը նշել է, որ թվով երեք հեռախոսահամարների մասով, որոնցով Ընկերությունը Հանձնաժողովին պայմանագրեր չի տրամադրել՝ վաճառվել են հոկտեմբերի 3-ին, այդ համարներից որևէ զանգ, SMS հաղորդագրություն չի ուղարկվել և դրանք արդեն իսկ հոկտեմբերի 4-ին արգելափակվել են, ինչը պայմանավորված է եղել նրանով, որ պատերազմական իրավիճակում դիլերների կողմից վաճառքի առանձին տարածքներում, այդ թվում՝ Բագրատաշենում, սկսել են ի հայտ գալ որոշակի խնդիրներ (ռիսկեր), և Ընկերության ղեկավարությունը հոկտեմբերի 4-ին որոշում է կայացրել Բագրատաշենում գործունեություն իրականացնող դիլերին տրամադրված խմբաքանակից ավելի քան 600 հեռախոսաքարտեր, այդ թվում՝ տվյալ 3 համարները, ոչնչացնել: Այդ ռիսկերը պայմանավորված են եղել այն հանգամանքով, որ որոշ քարտեր գտնվել են օտարերկրյա քաղաքացիների տիրապետման ներքո, ինչը հիմնավորված ռիսկեր է առաջացրել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար, և այդ ռիսկերը հնարավորինս բացառելու նպատակով Ընկերությունը ոչնչացրել է նշված հեռախոսահամարները: Հետևաբար, Ընկերությունը պնդում է, որ գործել է ավելի քան բարեխղճորեն, գործադրել է բոլոր ջանքերը հանրապետության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, անտեսելով այն հանգամանքը, որ հեռախոսաքարտերը ոչնչացնելով՝ Ընկերությունը կրում է ֆինանսական կորուստներ, և այդ պայմաններում Ընկերությանը պատասխանատվության ենթարկելը առնվազն անհիմն է և անհամաչափ,

գ. Ընկերության մեկնաբանմամբ, թեև նշված երեք հեռախոսահամարների մասով պայմանագրեր չտրամադրելով և բազա չվարելով որևէ կանոն չի խախտվել,

այնուամենայնիվ, եթե մի պահ թույլ տանք խախտման առկայություն, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի: Ընկերության դիտարկմամբ, այս իրավանորմից նույնպես հետևում է, որ վերջինս ենթակա չէ պատասխանատվության, քանի որ գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում՝ վերացնելով պետությանը և հասարակությանը սպառնացող վտանգը, և այս պարագայում պայմանագրերի կնքումը և բազայի վարումն ակնհայտորեն ավելի նվազ կարևորություն ունեն: Ընկերության գնահատմամբ, ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ պատասխանատվության է ենթարկվել Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 8-ի №285Ն որոշման 1-ին կետը խախտելու համար, այն պարագայում, երբ Հանձնաժողովն ինքն է որոշման «Ժբ» կետում արձանագրել, որ թվով 3 հեռախոսահամարների մասով հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրեր առկա չեն: Այստեղ ողջամտորեն հարց է առաջանում, ինչպե՞ս Ընկերությունը կարող էր վարել մի պայմանագրի բազա, որն առկա չէ, կամ ո՞ր օրվանից է հաշվարկվում բազա վարելու պարտականության ժամկետը: Հաշվի առնելով, որ այդպիսի պայմանագրեր առկա չեն եղել, Ընկերությունը չի կրել այդ պայմանագրերի բազան վարելու պարտականություն, և հետևաբար թույլ չի տվել և չէր էլ կարող թույլ տալ նշված որոշման 1-ին կետի խախտում, որի համար ենթարկվել է պատասխանատվության,

դ. Ընկերությունը, մատնանշելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը, պնդել է, որ նույնիսկ եթե չգործեր Ֆորս մաժորի առկայության պայմաններում, իր թույլ տված ենթադրյալ խախտումները, միևնույնն է, ունեն նվազ նշանակություն, և Ընկերությունը ենթակա չէ վարչական պատասխանատվության: Մասնավորապես, վերջինս փաստել է, որ տվյալ դեպքում բազա վարելու պարտականությունը երկու հեռախոսահամարով ուշացվել է ընդամենը երկու օրացուցային օրով, որոնք նույնիսկ աշխատանքային չէին, հետևաբար, կարելի է եզրակացնել, որ այդ համարներով բազան վարվել է կանոններով սահմանված 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մյուս երկու համարով ուշացումը կազմել է

ընդամենը մոտ մեկ ամիս, ուստի, խոսքը գնում է շատ կարճ ժամկետների մասին և Ընկերությունը չի խուսափել իր պարտականությունները կատարելուց: Ստեղծված պայմաններում Ընկերության ենթադրյալ խախտումը կարող է որակվել որպես նվազ նշանակություն ունեցող և Ընկերությանը ազատել պատասխանատվությունից,

ե. անդրադառնալով Որոշման «թ» կետով արձանագրվածին (Լիցենզիայի պայմանների 5.25 կետի առնչությամբ)՝ Ընկերությունը նշել է, որ պատերազմի առկայությունը հայտնի է եղել Հանձնաժողովին, և դրա մասին վերջինիս իրազեկելը կրելու էր բացառապես ձևական բնույթ: Պատերազմի ժամանակահատվածում սուբյեկտները միտում են ունեցել ըմբռնումով մոտենալ միմյանց և խուսափել միմյանց լրացուցիչ ծանրաբեռնելուց, և այդ պարագայում Լիցենզիայի պայմանների 5.25 կետի վրա հղում կատարելը ողջամիտ չէ, քանի որ այն ինքնանպատակ չէ: Ամեն դեպքում, Լիցենզիայի պայմանների խախտման պատճառ հանդիսացող հանգամանքների մասին չհայտնելը չի բացառում այդ հանգամանքների առկայությունը: Այլ կերպ ասած, Ընկերությունը չի կարող ենթարկվել պատասխանատվության այն հիմքով, որ չի տեղեկացրել ենթադրյալ իրավախախտումների պատճառների մասին, այն պարագայում, երբ անձը ազատվում է պատասխանատվությունից օրենսդրությամբ նախատեսված հիմքերով: Այլ հարց է, եթե Ընկերությունը պատասխանատվության ենթարկված լիներ այդ հանգամանքների մասին չհայտնելու համար, ինչպիսին սույն դեպքում առկա չէ,

զ. Ընկերությունը պնդել է, որ վարչական մարմինը նախքան Ընկերությանը վարչական պատասխանատվության ենթարկելը պարտավոր էր գործել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 245-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, պետք է կատարեր գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն և միայն համոզվելով, որ Ընկերությունը թույլ է տվել իրավախախտում, և այդ իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելուց ազատող որևէ հիմք առկա չէ, Ընկերությանը ենթարկել պատասխանատվության,

2) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, որը տուժել է կարգավորողի որոշման արդյունքում, իրավասու է այդ որոշման հրապարակումից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, միջնորդել կարգավորողին, որպեսզի վերջինս վերանայի այդ որոշումը: Եթե նույն հոդվածի առաջին մասի համաձայն ներկայացվում է միջնորդություն, ապա կարգավորողը կարող է կարգադրել, որ մինչև խնդիրը վերանայելը խնդրո առարկա որոշումը գործողության մեջ չմտնի և այդ մասին լրացուցիչ որոշում կայացնելը, և պարտավոր է վերանայման միջնորդության ներկայացումից հետո՝ 180 օրվա ընթացքում, հաստատել, փոփոխել կամ ուժը կորցրած ճանաչել այդ որոշումը կամ դրա ցանկացած մասը: Եթե նույն հոդվածի երկրորդ մասի 1-

ին կետի համաձայն կարգադրություն չի արձակվում, ապա որոշումը շարունակում է գործել.

3) Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության ներկայացրած հիմնավորումները, հաստատված է համարում հետևյալը.

ա. Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 8-ի №285Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողները հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի կնքման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում սկսում են վարել փաստաթղթային և էլեկտրոնային կամ միայն էլեկտրոնային բազա, որը ներառում է պայմանագրի տեսաներածված պատճենը կամ էլեկտրոնային բնօրինակը, եթե պայմանագիրը կնքվել է էլեկտրոնային եղանակով՝ օպերատորի գործառնական գրասենյակում, իսկ 6-րդ կետի համաձայն՝ հանրային շարժական բջջային կապի հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի կնքման և կատարման կարգի, ինչպես նաև որոշման 1-5-րդ կետերի պահանջների պահպանման (այդ թվում՝ ծրագրային, տեխնիկական և այլ միջոցների ապահովումը) պատասխանատվությունը կրում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շարժական բջջային կապի ծառայություններ մատուցողը (տվյալ դեպքում՝ Ընկերությունը),
- Լիցենզիայի պայմանների 8.2 կետի համաձայն՝ լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են, իսկ 1-ին կետի համաձայն՝ Ֆորս մաժորը արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են, որոնք ստեղծվել են լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը,

- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե ծանուցումից և լուսններից հետո Հանձնաժողովը որոշում է, որ կարգավորվող իրավաբանական անձը չի կատարել իր լիցենզիայի կամ թույլտվության որևէ պայման կամ Հանձնաժողովի կանոնների կամ կանոնակարգերի որևէ դրույթ, ապա Հանձնաժողովն իրավասու է կարգադրել, որ իրավախախտ կարգավորվող անձը վճարի տույժ կամ տուգանք, որը առնվազն պետք է կազմի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, սակայն չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը,

բ. Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումների պահանջներին համապատասխան, և այն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են, որով նաև հիմնավորվում է Հանձնաժողովի կողմից մինչև Որոշման վերանայումը Որոշումը գործողության մեջ չմտնելու վերաբերյալ կարգադրություն չարձակելու հանգամանքը: Մասնավորապես, Ընկերությունը խախտել է Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 8-ի №285Ն որոշման 1-ին կետի պահանջները, որի՝ ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը չի հիմնավորվել, ինչից ելնելով՝ Ընկերությունը ենթարկվել է պատասխանատվության,

գ. Ընկերությունը չի հիմնավորել Որոշմամբ որևէ իրավակարգավորման խախտման հանգամանքը, իսկ բողոքում նշված պնդումներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- Ընկերությունը, ինչպես նախքան Որոշման կայացումը, այնպես և սույն վարույթի շրջանակում, որևէ կերպ չի հիմնավորել քննարկվող պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար: Մինչդեռ Ընկերությունը չի հիմնավորել իր թվարկած հանգամանքների ուղղակի առնչությունը Հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 8-ի №285Ն որոշմամբ ամրագրված պարտավորության կատարման անհնարինության հետ, նշված

հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը ձեռնարկելու հանգամանքը: Ավելին, Ընկերությունն ինքն է ընդունում, որ թեև ուշացումով, սակայն ֆորս մաժորի առկայության պայմաններում կատարել է համապատասխան պարտավորությունը, ինչը, Հանձնաժողովի գնահատմամբ, վկայում է ոչ թե Ընկերության բարեխղճության (ինչպես վերջինս է պնդում), այլև այն մասին, որ ֆորս մաժորի գործողության ընթացքում այդուհանդերձ հնարավոր է եղել կատարել համապատասխան գործողություններ, ինչն էլ վկայում է դրա՝ Ընկերության պարտավորության անհնարինության չհանգեցնելու մասին:

Ինչ վերաբերում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի վկայակոչմամբ Ընկերության պնդմանն առ այն, որ ոչ թե ինքը, այլ Հանձնաժողովն է կրել Ընկերության մատնանշած հանգամանքների մեջ հավաստիանալու համար միջոցներ ձեռնարկելու պարտավորություն, ապա հարկ է նշել, որ այն հիմնավոր չէ և արդյունք է օրենքի սխալ մեկնաբանման: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածը, որպես վարչարարության սկզբունք, սահմանում է «հավաստիության կանխավարկածի» սկզբունքը: Վերջինիս նպատակը վարչական մարմինների և անձանց միջև փոխվստահության ձևավորումն է, ինչպես նաև նրանց միջև իրավահավասարության ամրապնդումը: Ըստ այդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Նույն հոդվածի 2-րդ պարբերությունը միաժամանակ արգելում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով: Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ օրենքներով սահմանվում է համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու պահանջ, անձը պարտավոր է դրանք ներկայացնել:

Ընդ որում, այդ փաստաթղթերը ներկայացվում են ոչ թե վարչական մարմնի մոտ անձի ներկայացրած տվյալների վերաբերյալ ծագած կասկածների առկայությամբ վարչական մարմնի և անձի միջև ծագած վեճը լուծելու նպատակով, այլ որպես իրավաչափ պարտավորության կատարման անհրաժեշտ պայման: Այսինքն, անձի կողմից իր համապատասխան պարտականության բարեխիղճ կատարման նպատակով համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու փուլում գործում է



հավաստիության կանխավարկածի սկզբունքը: Ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ վարչական մարմնի մոտ կասկած ծագելու դեպքում է միայն, որ ներկայացված տվյալների ոչ հավաստի լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այսինքն՝ տվյալ դեպքում վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե անձը համապատասխան փաստաթղթեր կամ տեղեկություններ ներկայացնելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը կատարել է:

Ինչ վերաբերում է վարչական վարույթի ընթացքում ապացուցման բեռի բաշխմանը, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով գործում է նույն օրենքի 43-րդ հոդվածը: Նշված իրավանորմը վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխում է կատարում՝ ելնելով նրանից, թե վարույթի ընթացքում ընդունվող ակտը վերջինիս համար բարենպաստ, թե ոչ բարենպաստ փաստական հետևանքներ է ունենալու: Ըստ այդմ, վարչական վարույթում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների դեպքում: Օրենսդրական նման կարգավորումը նկատի է առնում, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության հիմնավորումը հնարավոր չէ վերապահել վարչական մարմնին, քանի որ, որպես կանոն, շահագրգիռ անձն է տեղյակ իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությանը, և նա է տիրապետում այդ հանգամանքներն ապացուցող տվյալների: Նշվածը լիովին համահունչ է հիշյալ իրավանորմերի առնչությամբ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշմամբ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը, որի համաձայն նաև՝ չնայած այն հանգամանքին, որ ստուգումը բարենպաստ ընթացակարգ չէ մասնավոր անձի համար, սակայն դրա շրջանակում իր վկայակոչած հանգամանքները հիմնավորող փաստերը նրա դրությունը բարելավող փաստական հանգամանքներ են, որոնց ապացուցման պարտականությունը կրում է ինքը:

- Ընկերության մատնանշած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի դրույթները, այդ թվում՝ արարքի նվազ նշանակությամբ կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործելով պայմանավորված պատասխանատվությունից ազատելու առնչությամբ, Հանձնաժողովի գործունեության նկատմամբ կիրառելի չեն, քանի որ

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավակարգավորումներն ամրագրված են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով: Տվյալ դեպքում գործող իրավակարգավորումների համաձայն՝ Ընկերությունը թույլ տրված խախտման համար կարող էր չենթարկվել պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք լինեին, ուստի վերջինիս կողմից վկայակոչված՝ հեռախոսահամարների արգելափակման և ոչնչացման հանգամանքը կամ, Ընկերության գնահատմամբ, արարքի նվազ նշանակությունը կամ «ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործելու» հանգամանքը որևէ կերպ չեն կարող ծառայել որպես խախտման համար պատասխանատվությունից ազատման հիմք: Ավելին, ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործելու փաստը ևս Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Հաստատել Որոշումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան  
-- հուլիսի 2021թ.